ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷՆԵՐԳԵՏԻԿ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ԵՎ ԲՆԱԿԱՆ ՊԱՇԱՐՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐԻ

ՀՐԱՄԱՆԸ

20 սեպտեմբերի 2018 թվականի N 116-Ա

ՕԳՏԱԿԱՐ ՀԱՆԱԾՈՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆԱՀԱՆՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ԸՆԴԵՐՔԻ ԵՐԿՐԱԲԱՆԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՀԱՎԱՍՏՎԱԾ ԸՆԴԵՐՔԻ ՏԵՂԱՄԱՍԻՑ ՀՐԱԺԱՐՄԱՆ ՀԱՎԱՍՏԱԳԻՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության ընդերքի մասին օրենսգրքի 45-րդ հոդվածով, հիմք ընդունելով «ԹԱԹՍԹՈՈՒՆ» ՍՊ ընկերության 2018 թվականի օգոստոսի 17-ի թիվ 17-08 գրությունը, Ընդերքի գործակալության պետի զեկուցագիրը.

Հրամայում եմ

1. «ԹԱԹՍԹՈՈՒՆ» ՍՊ ընկերությանը (այսուհետ՝ ընկերություն) տրամադրել երկրաբանական ուսումնասիրության իրավունքի օբյեկտ համարվող ընդերքի տեղամասից հրաժարման թիվ 16 հրաժարման հավաստագիրը:

2. Ուժը կորցրած ճանաչել «ԹԱԹՍԹՈՈՒՆ» ՍՊ ընկերությանը ՀՀ Սյունիքի մարզի Այգեձորի պղինձ-մոլիբդենային հանքավայրի Թղկուտի տեղամասի ստորին հորիզոններում և թևերում երկրաբանական ուսումնասիրություններ կատարելու համար 2012 թվականի հոկտեմբերի 12-ին տրամադրված ԵՀԹ-29/112 թույլտվությունը, լուծել ընդերքօգտագործման թիվ Պ-112 պայմանագիրը:

3. Ընդերքի գործակալության պետին՝

- 2-օրյա ժամկետում ծանուցել ընկերությանը հրաժարման հավաստագիրը ստանալու մասին,
- ապահովել համապատասխան գրառումների կատարումը երկրաբանական ուսումնասիրության իրավունքի հաշվառման գրանցամատյանում:

4. «Հանրապետական երկրաբանական ֆոնդ» ՊՈԱԿ-ի տնօրենին՝

ապահովել ֆոնդային փաստաթղթերում սույն հրամանից բխող համապատասխան գրառումների կատարումը՝ Ընդերքի գործակալության կողմից փաստաթղթերի փաթեթի ստացումից եռօրյա ժամկետում:

5. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և կարող է բողոքարկվել վարչական կամ դատական կարգով՝ ուժի մեջ մտնելու օրվանից 2 ամսվա ընթացքում:

6. Սույն հրամանի կատարման հսկողությունը վերապահել Հայաստանի Հանրապետության էներգետիկ, ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարի տեղակալ Վարդան Գևորգյանին:

ԱՐԹՈՒՐ ԳՐԻԳՈՐՅԱՆ